

## Զ Ե Կ Ո Յ Ց Ց

### ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՌԻԹԵԱՆ

#### ԸՆԴՀ. ՏՆՅՈՒՆ Գ. ԿԻՐԱԿՈՍԵԱՆ ՀԱՆԳՍՏԵԱՆ ԿՈՉՈՒԱԺ

Ներկայիւս կը փափաքինք ծանուցանել թէ յառաջիկայ Յունիս 15-էն սկսեալ հանգստեան կը կոչուի Հ. Բ. Բ. Միութեան Ընդհանուր Տնօրէն Տիար Գ. Կիրակոսեան, իր բեցուն տարիքին բերումով, նկատելով որ է մօտոյ կը լրանայ կեանքին 82-ամեանկը:

Բազմավաստակ կրթական մշակ եւ բարգահմում մտաւորական, ան իր ազդային ծառայութեան 60-ամեանկը բոլորեց 1969 Սեպտեմբերին, իր գուցէնական կրթութենէն ետք ու արտակարգ յաջողութեամբ մը ստացած ուսուցչական բարձրագոյն վկայականով՝ դաստիարակի պաշտօնը սկսած բրալով 1909 Սեպտեմբերին, իր ծննդավայրին՝ Սեբաստիոյ մէջ:

Ցաջորդ տարեք քրջանէն սկսեալ ամբողջ տասնամեակ մը պաշտօնաւարած է Կ. Պոլիս, ապա իրագործած իր երիտասարդութեան երազը՝ համար լրարանական ու բարձրագոյն ուսման դոյդ բնթացքներ աւարտելով, Փարիզ:

Այսուհետեւ երկար տարիներ շարունակած է գործել կրթական ասպարէզին մէջ, միշտ իրեւ Տնօրէն՝ Գաւհիրէի Ազգ. Վարժարաններուն, Մելոննեան Կրթական Հաստատութեան եւ Կալկաթայի Հայոթ Մարդարական Ճեմարանին:

Հ. Բ. Բ. Միութեան հետ իր կապերը կը սկսին Մելոննեան Հաստատութեան իր պաշտօնավարութեան շրջանէն, որպէս անոր առաջին Ընդհանուր Տնօրէնը, յետոյ՝ երկրորդ Ընդհանուր Տնօրէնը՝ Վատերազմը նախորդող երկու տարիներուն՝ Փարիզի մէջ Միութեան զանազան ժողովներու իր անդամակցութեամբ եւ Ընդհանուր Քննիչի պաշտօնով՝ որ պատերազմի պայթումին հետեւաներով շուտ վերջ դառած է:

Իր ներկայ պաշտօնին ձեռնարկած է ան 1946-ին եւ ընդհանուր կերպով Հ. Բ. Բ. Միութեան ծառայութեան մէջ եղած է երեսուներեք տարի:

Տիար Գ. Կիրակոսեան մթանոսական Կառավարութենէն վարձատրը-ած է Officier d'Academie-ի պատուահանով:

Չենք անդրադառնար իր գործի աշխատութեանց: Բայց երբ կը քաւ-ուի իր այնքան պատասխանատու պաշտօնէն, խորազոյն զնոսհասանքով կը յայստարարենք թէ ան միւս գործեց աղքանէք Հայու աննուազելի եռանդոյ, Բարեղործականի կոչումին բարձրագոյն դիտակցութեամբ եւ օրինակելի պարտաճանաչութեամբ, իր բազմակողմանի կարողութիւնները ի սպաս դնելով իր պաշտօնին մարդկորէն անթերի կատարման ջանքերուն:

Այժմ երբ իր արժանի հանգիստը կ'առենք, անուղղակի կերպով եւս  
ան պիտի շարունակի ծառայել իր սիրելի Միութեան:

Կեդրոնական Վարչական Ժողովը Տիար կիրակոսեանի յաջորդ ըն-  
տրած է կարող, երիտասարդ ոյժ մը, յանձին Տիար Միսաք Հայկեացի, որ  
պաշտօնի կը կոչուի իրրեա Ընդհանուր Տնօրիչ:

Տիար Հայկենց ինք ալ նախկին գաստիարակ մըն է, որ ապա եղած  
է Գալիֆորնիա հրատարակուող «Նոր Օր» թերթի խմբագիր: Ան վերջին քա-  
նի մը տարիները հետեւած է տնտեսագիտական ուսմանց եւ նախազահան Տի-  
ար Մանուկեանի առաջնորդութեամբ ընտելացած է Հ. Բ. Լ. Միութեան  
վարչական գործերուն:

Յառաջիկային առիթը կ'ունենանք զինքը աւելի լայնորէն ներկայաց-  
նելու:

Դիմուն ԿԵԴՐ. ՎԱՐՉ. ԺՈՂՈՎԻ

Նիւ Եորք,

4 Յունիս 1970